

“13” օգոստոսի, 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ ՀՏԶՀ), ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանի, որը գործում է ՀՏԶՀ-ի Կանոնադրության հիման վրա, մի կողմից (այսուհետ՝ Նվիրատու) և ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքը (այսուհետ՝ մասնակից համայնքներ), ի դեմս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի, մյուս կողմից, «Գորիս խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների և տրանսպորտային համակարգի բարելավում, գյուղատնտեսության ոլորտի աջակցություն, աղբահանության և լուսավորության համակարգի արդիականացում, ջրամատակարարման համակարգի բարելավման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում,

պայմանավորվում են հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Նվիրատուն պարտավորվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում իրականացվող Ծրագրի շրջանակներում Նվիրատուին որպես նպատակային նվիրաբերություն տրամադրել Պայմանագրի 2.1. կետով սահմանված տեխնիկական միջոցներն ու սարքավորումները, իսկ Նվիրատուն պարտավորվում է իրականացնել Նվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների նպատակային օգտագործումը, ուղղված նախ՝ Գորիս խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների և տրանսպորտային համակարգի բարելավմանը, գյուղատնտեսության ոլորտի աջակցությանը, աղբահանության և լուսավորության համակարգի արդիականացման, ջրամատակարարման համակարգի բարելավմանը, հետո տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների վճարի դիմաց օգտագործման հանձնելու հաշվին՝ համայնքային բյուջեի համալրմանը:

### 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն Պայմանագրի շրջանակներում Նվիրատուի կողմից որպես նպատակային նվիրատվություն Նվիրատուին տրամադրվում են հետևյալ տեխնիկական միջոցներն ու սարքավորումները.

	Տեխնիկական միջոցներ և սարքավորումներ	Քանակ	Մոդել	Մերիական համար	Գին
1	Ավտոկռունկ ամրաշրջանակ	1	KC-55713-1, ԿԱՄԱԶ-65115	Z8C557131M0000832 XTC651155M1446085	61,300,000
	Ընդամենը	1			61,300,000

2.2. Կողմերը արձանագրում են, որ սույն Պայմանագրի շրջանակներում Նվիրատուին տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների ընդհանուր արժեքը կազմում է 61,300,000 (վաթսուամեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ:



- 2.3. Նվիրատուն պարտավորվում է վարել նվիրաբերված տեխնիկական միջոցների և սարքավորումների օգտագործման հետ կապված գործառնությունների առանձնացված հաշվարկ:
- 2.4. Նվիրաբերված տեխնիկական միջոցները և սարքավորումները չեն կարող օտարվել, սեփականաշնորհվել կամ օգտագործվել այլ նպատակներով Ծրագրի ավարտից հետո **5 (հինգ)** տարվա ընթացքում: Բացառություն են կազմում այն դեպքերի, երբ տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների շահագործման ժամկետը **վերը նշված ժամկետից** պակաս է: Նման դեպքերում նվիրաբերված տեխնիկական միջոցները և սարքավորումները չեն կարող օտարվել, սեփականաշնորհվել կամ օգտագործվել այլ նպատակներով մինչև շահագործման ժամկետի ավարտը: Նշված պայմանը խախտելու դեպքում Նվիրատուն իրեն իրավունք է վերապահում Նվիրատուից հետ պահանջել տրամադրված տեխնիկական միջոցներն ու սարքավորումները կամ դրանց արժեքին համապատասխան գումարը:
- 2.5. Նվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագիրը կնքելուց **10 (տասն)** օրացուցային օրվա ընթացքում իրականացնել տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների պետական գրանցումը համապատասխան մարմիններում:
- 2.6. Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված տեխնիկական միջոցների և սարքավորումների օգտագործումը Նվիրատուի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, ապա դրանք կարող են օգտագործվել այլ նպատակով **միայն Նվիրատուի գրավոր համաձայնությամբ**:
- 2.7. Եթե Նվիրատուն նվիրաբերած տեխնիկական միջոցներն ու սարքավորումները օգտագործել է Նվիրատուի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն Պայմանագրի **2.5** կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա Նվիրատուն կամ նրա իրավահաջորդ իրավաբանական անձը իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում:
- 2.8. Նվիրատուն պարտավորվում է կրել Ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների պահպանման և շահագործման ծախսերը:
- 2.9. Նվիրատուն պարտավորվում է ապահովել Ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների սպասարկումն ու շահագործումը համապատասխան որոկավորում ունեցող մասնագետների/անձնակազմի միջոցով: Նշված պահանջին բավարարելու համար Նվիրատուն պարտավորվում է կազմակերպել և անցկացնել մասնագիտական դաշնթացներ:
- 2.10. Նվիրատուն պարտավորվում է Ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների պահպանման ու շահագործման պատշաճ պայմաններ ստեղծել, մասնավորապես՝ կայանատեղի ապահովել Ծրագրի շրջանակներում տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների համար:
- 2.11. Նվիրատուն պարտավորվում է երաշխիքային ժամկետներում իրականացնել տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների սպասարկումը Նվիրատուի կողմից նշված մատակարար ընկերությունների միջոցով:
- 2.12. Նվիրատուն պարտավորվում է տարեկան մեկ անգամ գրավոր տեղեկատվություն ներկայացնել տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների վերաբերյալ, ինչպես նաև ըստ Նվիրատուի պահանջի՝ միջոցներ ձեռնարկել տրամադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների մոնիտորինգը Նվիրատուի ներկայացուցիչների կամ նրա լիազորված անձանց կողմից իրականացնելու համար:

2.13. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, օրինակ՝ ջրհեղեղ, հրդեհ, ռազմական և արտակարգ դրության հայտարարում և այլն: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին:

**3. Տտեխնիկական միջոցների և սարքավորումների տրամադրման կարգն ու ժամկետները**

3.1. Սույն Պայմանագրի 2.1 կետով նախատեսված տեխնիկական միջոցները և սարքավորումները Նվիրատուի կողմից Նվիրատուին կտրամադրվեն մինչև **“31” օգոստոս, 2021 թ.:**

3.3. Սույն Պայմանագրի 2.1 կետով նախատեսված տեխնիկական միջոցների և սարքավորումների հանձնումը փաստաթղթավորվում է Ընդունման-հանձնման ակտ(եր)ով:

**4. Եզրափակիչ դրույթներ**

4.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

4.2. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու իրավագոր օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է Կողմերից յուրաքանչյուրի մոտ:

4.3. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4. Սույն Պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները վավեր են, եթե կազմված են միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով:

4.5. Սույն Պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև սույն Պայմանագրի հավելվածները և Նվիրատուի լիազորությունները հաստատող փաստաթղթերի պատճենները կցվում են սույն Պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

4.6. Կողմերի միջև սույն Պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները հնարավորության սահմաններում պետք է կարգավորվեն անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7. Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն Պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմերի ստորագրությունները**

**Նվիրատու**

**Գործադիր տնօրեն՝ Ա. Սողոմոնյան**



(ստորագրություն)

**Նվիրատու**

**ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի  
ղեկավար՝ Ա. Առուշանյան**



(ստորագրություն)